ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ, Անի, *կազմող՝ Աստղիկ Կարապետյան (Շիրազ), Ե., ԵՊՀ հրատ., 2011, 307 էջ, 4 ներդիր, խմբագիր՝ Ս. Մուրադյան:*



Հովհ. Շիրազի «Անի» պատմական պոեմը մեծ բանաստեղծի անտիպներից է: Ինչպես «Թոնդրակեցիների», այնպես էլ այս երկի տպագրության հարցում աջակցել է ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը: Բանաստեղծի զավակները սիրով տրամադրել են պոեմի այն մեքենագիր տարբերակը, որ ժամանակին հեղինակը հետ է վերցրել «հրատարակչությունից՝ չհամաձայնելով այն … աղճատումներին, որ նրան պարտադրել էին» (էջ 4) խմբագիրները:

Ընդառաջ գնալով 1961 թ. Անիի՝ հայոց մայրաքաղաք հռչակվելու 1000-ամյակի հոբելյանին՝ բանաստեղծը «Անին» գրել է 1950-1951 թթ.՝ դժվարին մի ժամանակաշրջանում, երբ ԽՍՀՄ-ում բարձրացել էր հետպատերազմյան շրջանի ստալինյան բռնությունների նոր ալիքը: Արհամարհելով վտանգը՝ հեղինակը խիզախել է, բայց տպագրության խնդիրը դարձել է երկի ոդիսականի պատճառ: Պոեմը ՀԿԿ Կենտկոմից դեպի այս կամ այն խմբագրություն երկար ու տևական ճանապարհ է անցել, և բանաստեղծն իր սիրելի պոեմը կենդանության օրոք տպագրված չի տեսել: Սկսած միջնադարի նշանավոր մեծերից՝ Անիի մասին իրենց հիացմունքն են արտահայտել Ներսես Շնորհալին, Ղևոնդ Ալիշանը, Խաչատուր Աբովյանը, Պետրոս Դուրյանը, Դանիել Վարուժանը և ուրիշներ: Անի քաղաքը, որ դարձավ նաև Հովհ. Շիրազի հիացմունքի առարկան, երկար ժամանակ «Մեր ժողովրդի պատմական հիշողության, գիտական և գեղարվեստական գրականության մեջ,- ինչպես նշում է պրոֆ. Ս. Մուրադյանը,- մնացել է իր երկու տարբեր, անգամ հակադիր վիճակներով. անցյալը՝ փառահեղ ու հերոսական, ներկան՝ անկյալ ու ողբերգական» (Ս. Մուրադյան, Գրական հանգրվաններ, հ. Ա, Ե., 2003, էջ 56): Անգամ լքված ու գետնահար՝ Անին շքեղ է, պատկառազդու և շարունակում է շարժել իրեն ճանաչող արվեստագետների, գիտնականների ու բոլոր մարդկանց զարմանքն ու հրճվանքը:

Հովհ. Շիրազի «Անի» պոեմը բաղկացած է՝ նախերգանքից, մասն առաջինից (8 գլուխ), մասն երկրորդից (12 գլուխ), մասն վերջինից (4 գլուխ) և վերջերգանքից. ընդհանուր առմամբ՝ 3 մաս և 24 գլուխ:

Մասն առաջինում բանաստեղծը նախապատրաստում է պոեմի մուտքը: Այն դառնում է Անիի պարսպադռանը քանդակված խորհրդանշական իմաստուն առյուծի ահեղ մռնչյունը՝ ծնված կարոտի կսկիծից և դարավոր անզորության զգացողությունից:

Պոեմն սկսվում է բանաստեղծի 1000-ամյա մորմոքով, երբ երեկոյացող օրվա ծանր մտորումների մեջ՝ նա ոգում է իր ցավը: Ինքն այստեղ է, քաղաքը՝ անհաղթահարելի սահմանագծից անդին: Քնարական հերոսը կսկրծում է ցավից, քանզի մի թռչնի չափ իրավունք չունի՝ մտնելու երբեմնի հայոց փառքի քաղաքը, փարվելու նյութեղենացած

ոգեղեն հրաշքին: Դաժան ներկան հանդես է գալիս պատմության հակադրություն-հեգնանքի ձևով: Մերն է այս ամենը, բայց՝ թալանված ու խլված մեզնից: Վիշտը վանելով՝ բանաստեղծն Արագածի ձեռքով արևի ծիրանին է հագցնում մայր քաղաքին, մտքի ու երևակայության ուժով կենդանություն պարգևվում նրան, ցույց տալիս անառիկ քաղաքի պարիսպները: Այդ պարիսպներից ներս «հոսող քարավանների» ընթացքով սկսվում է կյանքն Անիում: Այդ հնարանքով բանաստեղծը կենդանության նշաններ է հաղորդում վաղուց անշնչացած քաղաքին: Դեպի մայրաքաղաք են շարժվում Հայաստանի և Արևելքի վաճառականները՝ անբավ գանձեր ու պերճանք տանելով ներս: Քաղաքում թևածող այդ շքեղության մեջ ամեն ինչ պատկառանք է ներշնչում, ամենաշքեղը, սակայն, անեցի հայուհիներն են: Նրանցից մեկն է Տրդատ ճարտարապետի դուստրը՝ Այծեմիկը: Եթե քաղաքը թագուհի է Արևելքի քաղաքների մեջ, ապա նրա չքնաղ հերոսուհին՝ ամենագեղեցիկն է շրջակա ժողովուրդների գեղեցկուհիների մեջ: Պարսիկ մի «բազրգան» (վաճառական) չի թաքցնում իր հիացմունքը նրա նկատմամբ՝ ասելով. «Մի՞թե հայուհիք այսքան չքնաղ են՝ պարսկուհուց էլ վեր» (էջ 28): Իսկ շուկայի աշխույժը տարածվում է ողջ քաղաքով մեկ: Իրար են խառնվում պատմությունը, ժամանակը, կյանքը, սերը, խանդը:

Եվ ահա սպարապետ Պահլավունին զորքը տանում է վարժանքի: Ընթերցողի առջև բացվում է սրտառուչ տեսարան, մի պառավ տատ բերում է մատաղահասակ թոռանը, որ համբուրի մեծ զորականի շորի քղանցքը: Իսկ հուզված քաջն օրհնում է պատանուն՝ «Աստված պահի» ասելով: Թշնամու աչքից ոչինչ չի վրիպում. նա աչալուրջ հսկում է ամենուր և խեղդվում նախանձից: Բանն այնտեղ է հասնում, որ թշնամական աղոթքը վերածվում է բանաձևի. «Հանի՛ր մի աչքս,- դիմում է Աստծուն,- միայն թե հայոց երկու աչքն հանես» (էջ 31): Հակառակ այս նենգ ցանկության՝ քարագործ Տրդատը հզոր ու ճարտար որմնադիրների ձեռքով կառուցում է շքեղ պարիսպները. «Որպես քարացած աղոթքներն Հայոց, Հայոց մեղեդիք, /Անին՝ քարացած երաժշտություն՝ հասած մինչ երկինք» (էջ 36): Իսկ Անի եկածների մեծ մասն օտարերկրյա լրտեսներ են, որոնք ուշի ուշով հետևում են քաղաքի անցուդարձին:

Գագիկ մեծ արքան (Գագիկ Առաջինը՝ 990-1020) երկու որդի թողեց, որոնք թուլասիրտ մարդիկ էին: Նրանք կռվի ելան հայրական գահի համար, և Ախուրյանը հայ կտրիճների արյամբ ներկվեց: Պահլավունյաց ազդեցիկ իշխանների միջամտության շնորհիվ Օհանին (Հովհաննես-Սմբատին՝ 1020-1041) անցավ մայրաքաղաք Անին, Աշոտ արքաեղբորը՝ շրջակա տարածքները: Աշոտը՝ Գագիկ Երկրորդի հայրը, այսպես է բնութագրում Օհանին. «Թույլ թագավոր է, հզոր աբեղա, /Նա գրքի քաջ է և ոչ թե գենքի» (էջ 39): Արքաեղբայր Աշոտը չի համակերպվում եղածի հետ և ձգտում է խլել եղբոր բաժինը ևս: Նա խաբեությամբ իր մոտ է կանչում Օհանին ու գերում: Սպարապետը փրկում է դրությունը և արքային հետ բերում: Վշտով է լցվում Օհան-Սմբատը, իրեն հանձնում խմիչքին: Ըմբոստ նախարարներն ու իշխանները հրաժարվում են զորք տալ: Երկիրն օր օրի թուլանում է: Բայց ամենատագնապալին Տարոնից ու Վասպուրականից եկած լուրերն են: Անի է հասնում գուժկանը և ընկնում Օհանի ոտքերը. «Զորք տուր, զորք ինձ, զորքով գնամ /Գուցե ազգով վերադառնամ, /Ետ խլեմ Վանն իմ ավերված, /Ետ խլեմ ծովն իմ Բզնունին» (էջ 57): Բայց տկար արքան զորք չի տալիս, և քաջ սուրհանդակը դաշույնն իր սիրտն է խրում: Արծրունյաց Սենեքերիմ անարի արքան վախեցած սկսում է հայաթափել երկիրը: Բյուզանդցու (բյուզանդացու) ստոր դրդումով վերջինս, ըստ պատմիչ Մ. Ուռհայեցու՝ դատարկում է Վասպուրական աշխարհը՝ Վասիլին հանձնելով 72 թեմաբերդ և 4400 գյուղ՝ Սեբաստիայում տաքուկ անկյուն ճարելու հեռանկարով կրկնելով Վասակ Սյունու նողկալի արարքը: Իսկ թուլամորթ Օհանը գինու և վայելքի մեջ է խեղդում ծանր

վիշտը: Նա նույնիսկ իմաստնախոսում է. «Հայոց մեծերը հայոց մեծ վշտով, /Խելագարվում են կամ իմաստնանում» (էջ 102): Օհանի միտքը թեև իմաստուն է, բայց խորքում հակված է դեպի դավաճանությունը:

Մասն երկրորդում այս «իմաստունը» ոչինչ չի անում՝ փրկության դուռ գտնելու համար: Նա կարող է միայն արցունքակալած աչքերով լսել վանեցի որսկանի մորմոքը, թե՝ «Արծաթ է ձուկն Ախուրյանի, /Ես իմ Վանա հովը կուզեմ, /Ախ, ոսկի էր ձուկը Վանա, /Ես իմ Վանա ծովը կուզեմ» (էջ 110):

Հայրը կորցրած հողն է ուզում, որդին՝ սիրած Այծեմիկին: Արքան էլ երազում է Անիի շենացումը, հայոց հույսի կենդանացումը: Բայց չի անում որևէ գործնական քայլ, որ երկիրը հանի դժոխային վիճակից: Մինչդեռ շարունակվում է գաղթականների չընդհատվող հոսքը դեպի Անի: Մայր տաճարի դռան առջև հայի ողբն է երկինք հասնում: Հայ գաղթականների շուրթերից կարոտի և հույսի մեղեդիներ են հնչում. «Կռո՛ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս»: Բանաստեղծը դատապարտում է Արծրունյաց դավաճան իշխանին, քանզի Անիի թուլացման հիմնական պատճառներից մեկը Վասպուրականի ամայացումն էր: Եվ եթե անիծյալ Սենեքերիմը երկրի կեսն է ամայացրել, ապա թուլամորթ Օհանը մոռացության է մատնել նրա վիճակը: Բանաստեղծը խոսք է բացում կնոջ ու սիրո հարցի շուրջ՝ բացահայտելու անպտուղ այրմարդու ամուլ մտքի և կյանքի սնանկությունը: Կնոջ հավատարմության ու դավի մասին այս բանավեճն ընդհատվում է Գողթան երգիչների՝ Անիին ձոնված երգով: Սպարապետը գաղթական դարձած գուսաններին պալատ է կանչում. «Իր պալատում Պահլավունին՝ /Լսեց, տխրեց Գողթան երգով, /Պալատ կանչեց գուսաններին. /– Երգե՛ք, – ասաց , – հայոց երգով» (էջ 116):

Սա պոեմի բարձրակետն է. հայոց մուսան հգորանում է, բայց մարում է ռազմական հանճարը, և թուլանում՝ հայի բազկի ուժը: Աստղիկ աստվածուհին այլևս Արածանիում չի լողանա, քանի որ հարեմ է տարվել, Մհերն այլևս կռիվ չի գնա, քանզի ժայռում է փակվել: Հայտնվում է արքան, և կրկին խոսում են գերության, պահանջվելիք հարկերի մռայլ հեռանկարի շուրջ: Գուսաններն արքայի պատվերով հայրենյաց հողի ողբն են ասում. «Ինչպե՞ս ասեմ քեզ Հայաստան, /Երբ Տիգրանի դատը չունես, /Երբ գերի են Վան ու Ոստան, /Երբ քո Մասիս սարը չունես…» (էջ 120): Արքան տագնապի մեջ է «զարհուր գաղթի» համար: Նա խորհում է, որ օտարները հայոց արմատը չեն կարող գտնել, ուրեմն և այն կտրել չեն կարող, և մատնվում է անգործության: Բայց խրոխտանում է սպարապետի ոգին: Նա չի կորցնում հույսն ու արիությունը. «Չէ՛, չի՛ ցամքի գետը»,- /Այսպես մռնչաց սպարապետը /Ու գուսանների հետ երգեց գինով, /Լիքն իմաստությամբ ու լիքը քենով» (էջ 121):

Դիմելով հակադրության հնարանքին և պատկերելով Անիի խռովյալ վիճակը՝ բանաստեղծն ստեղծում է անաղարտ սիրո և գեղեցկության մի չքնաղ տեսարան Այծեմիկի ու Վարազիկի մասին: Վանեցի Վարազիկին աղջիկն անկեղծ սեր է խոստովանում, և տղան մատանի է նվիրում նրան: Բայց աղջիկը վերադարձնում է մատանին՝ պնդելով, որ իր սերն է հավատարմության գրավականը, ոչ թե մատանին: Նա չի զղջում, որ հասարակ որսկանի կին է դառնալու:

Վճռական պայքարից առաջ Օհան-Սմբատը, Գետադարձ կաթողիկոսը և Պահլավունի սպարապետը քննարկում են Բյուզանդի՝ բարեկամ-թշնա- մի լինելու հարցը: Գետադարձը հանգստության և հեզության կոչ է անում: Արքան չի համաձայնում, թուրքի պես ստոր է համարում Բյուզանդին: Աղվեսական այն հանդարտությունը, որ պահպանում է Բյուզանդը, նույնքան վտանգավոր է, որքան թուրք-պարսիկի վայրագ արարքները: Նրա համար «/Մեկ են Բյուզանդիոն, Իրան թե

Թուրան, /Մեկն ավետարան, մյուսը Ղուրան» (էջ 143): Բանաստեղծը հուշում է, որ քրիստոնյա Բյուզանդը եղբայր չէ, այլ ծպտյալ թշնամի:

Իսկ բյուզանդական թղթաբերն ամբարտավան է ու պահանջկոտ: Նա սպառնալի-քին խառնում է իր հոգու թանձր թույնը՝ ասելով. «Քո ազգը սուտ է, մութն ու անանցյալ, /Եվ անգալիք է, նախիր մի անդեմ» (էջ 145): Չի էլ թաքցնում, որ իր խնդիրն է բաժանել հային հայից, տիրել Անիին և վերջ դնել Հայաստանին: Պահանջում է ձուլվել, թողնել մայրենին, գենքերը ոչնչացնել և միանալ իրենց: Կորցնելով ամոթը՝ սպառնագին տոնով է կարդում է նամակը: Սպարապետը վերցնում է այն, պատռում, զայրացած գարկում է հույնի դեմքին: Սա էլ արհամարհալի երթով, առանց արքային գլուխ տալու՝ դիմում է դեպի դուռը: Պահլավունին այդ անմիտի գլուխը թոցնում է՝ կասեցնելով նրա հանդուգն ընթացքը: Արքան վախեցած է ու կուչ եկած:

Գետադարձը համոզում է հնազանդ լինել, իսկ արքան սպարապետի մատից հանում է մատանին: Պահլավունին շատ է զայրանում և պնդում, որ թշնամին միայն այդպիսի պատասխանի է արժանի: Արքան ձերբակալում է վերջինիս, իսկ Գետադարձին Բյուզանդիա ուղարկում՝ իբր ժամանակ շահելու: Շուտով շողոմ ոճով գրված մի նամակ է գալիս Բյուզանդից, և կայսրը կանչում է ճարտարապետ Տրդատին՝ իր տաճարի կամարը կապելու: Պահլավունին և Տրդատը ցավով են խոսում նրա մասին, որ հայ լինելով՝ դավում է ազգին: Մորիկից մինչև Վասիլ նրանք յոթն են և մեզ ավելի մեծ վնաս են պատճառել, քան օտարները: Դեռ Բյուզանդի հարցը չլուծած՝ նոր պահանջներ են գալիս Դվնո խանից և արաբ խալիֆից: Պարսկուհին սուտ երդումով խաբում է Օհանին և համոզում նրան իր հորը հանձնել Անին: Այդ դեպքում շահը կօգնի պայքարել ընդդեմ Բյուզանդի, իսկ տեր Պետրոսն իր թղթում հայտնում էր բյուզանդական մեծաթիվ զորքերի մասին, որ այս պարագայում պետք է ընդունել իբրև սպառնալիք: Կաթողիկոսը համոզում է, թե «դեղ չկա հայոց ցավին», ուստի մնում է զիջել: Թուլամորթ արքան գաղտնի գրում է կտակը և հանձնում դավադիր կայսեր դեսպանին: Կորցրած կամք ու արիություն՝ Օհանը հանձնում է երկիրը. «Ու ահից դառած նա ընկած մի կին՝ /Սուրբ գրքի վրա մեր հայրենական /Երդվել է, գաղտնի երդումը գրել, /Կնքել կնիքով իր արքայական, /Մի դժնախորհուրդ պայման է դրել, /Թե՝ «Գրով-երդմամբ իմ գահն ու Անին /Իմ մահից հետո կթողնեմ ես ձեզ…» (էջ 176):

Իր մեղքերը քավելու համար արքան արդեն Անի վերադարձած Տրդատի մոտ է ուղարկում Հայկին՝ Ախուրյանի ափին Հոռոմոսի վանքը կառուցելու համար: Նա հոգեկան տվայտանքների մեջ է և գիտե, որ իր շիրիմն անքար կմնա, իսկ դավը կբացվի: Շուտով ժողովուրդը գալիս է հիմնարկեքին: Ներկա են Օհանը, Գետադարձը և Պահլավունին: Կանգնածներն ինչ-որ բան են զգում հիմքը՝ վզի խաչ, Նարեկ, իսկ արքան՝ իր թագը, նաև մի փունջ մազ իր գլխից: Կաթողիկոսը օրհնում է շինությունը:

Պարսկուհի հարճն էլ արքայից պահանջում է մզկիթ կառուցել, քանզի ինքն իբր կրծքի տակ գահաժառանգ մանկանն է կրում: Ապշած արքան հարձակվում է պարսկուհու վրա՝ սպառնալով սպանել, քանզի ինքն ամուլ է: Հարճը զարհուրած խոստովանում է կեղծիքը: Զայրացած Օհանը, նժույգը հեծած, սուրում է Անիի արքայական գերեզմանոց՝ այցելելու ծնողների շիրմին: Սա դառնում է արքայի և պատմության, ճշմարտության և ստի, հերոսական անցյալի ու թշվառ ներկայի յուրատեսակ հանդիպումը: Ձիու սմբակը թակարդվում է դարավոր կաղնու փչակում: Հանգուցյալները շարժվում են, դուրս գալիս գերեզմաններից, արտահայտում իրենց ցասումը: Աշոտ Երկաթը աչքերից շանթեր է ցայտեցնում: Ոտքի ելած մայրը անեծք է թափում որդու գլխին: Նա խիստ պատվիրում է «սև թուղթը» վերացնել: Տիգրան Մեծը թքում է Օհանի դեմքին, հարցնում, թե ուր են իր թողած քաղաքներն ու երկիրը: Ընջեցյալները հալածում են Օհանին սուրբ վայրից: Վերջինս իջնում է ձիուց ու սկսում

փախչել: Տուն հասնելով՝ Օհանը խեղդել է տալիս պարսկուհուն և գիշերով գետը գցում: Պալատ է գալիս Գետադարձը, Օհանը խիստ հանդիմանում է կաթողիկոսին, իսկ վերջինս փորձում է ցրել արքայի մռայլ խոհերը:

Հոռոմոսի վանքում Օհանն ապարդյուն զղջում է ու աղոթում: Բյուզանդի ուղարկած հարեմում նա իր կրքերին հագեցում չի գտնում: Հայտնվում է Բյուզանդի դեսպանը և պահանջում քաղաքը հանձնել: Օհանը Պահլավունուն հրամայում է կապել սուրը և ելնել հույների դեմ, իսկ տեր Պետրոսին կալանավորել: Այս դրվագում բացահայտվում է մի կողմից, Օհանի, իսկ մյուս կողմից՝ Բյուզանդի երկկողմանի դավաճանությունը: Արքան կրկին Հոռոմոսի վանքում է, որտեղ և Հիսուսի պատկերի առջև սուրը սիրտն է խրում՝ վերջ տալով իր անփառունակ կյանքին:

Մասն վերջին (3-րդ): Անիում սգում են վախճանված արքայի համար: Հայտնվում են բյուզանդացիք և «սև թուղթը» բերում են Մայր տաճար: Ժողովրդի աչքում բացահայտվում է արքայի դավաճանությունը, և բոլորը սկսում են նզովել փոքրոգի արքայի հիշատակը: Քաղաքը շրջապատվում է բյուզանդական զորքով: Շահը նույնպես հարձակվում է բերդաքաղաքի վրա՝ գոչելով. «Այնպես մորթեմ մանուկ ու ծեր, /Որ չիք ջնջեմ ողջ ցեղը ձեր…» (էջ 272): Քաղաքը ուժեղ դիմադրություն է ցույց տալիս: Աջ ու ձախ նետահարում են Այծեմիկը, քաղաքի մյուս խիզախ պաշտպանները: Ընկնում են քաջարի մարտիկներ Տիգրան Հոնենցի Արտավազդը, Կորկոտենց հարսը, Վահրամ սպարապետի որդին և ուրիշներ: Ի վերջո, զոհվում են Այծեմիկը և քաջ սպարապետը՝ ճիշտ Վարդանի պես:

Վարազիկն ու նրա հայրը, իրենց որսն արած, գալիս են պաշարված քաղաք՝ չիմանալով քաղաքի շրջապատման մասին: Շահը գերում է նրանց և ցույց տալիս պատառոտված կտակը: Շահը ծերունի որսկանից պահանջում է իրեն առաջնորդել Անի, բայց նա հրաժարվում է: Դահիճը կուրացնում է հորն ու որդուն, սակայն նրանք անկոտրում են: Շահը կատաղում է: Խոստանում է թագավոր դարձնել որդուն, սակայն իզո՛ւր: Հայրը հասկանում է, որ որդին կարող է թուլանալ՝ Այծեմիկի պատճառով, և ցույց տալ քաղաքի ստորգետնյա ուղիները, ուստի պնդում է, որ կուգենա Անիի շահն ինքը դառնալ, թող որդուն մեջտեղից հանեն: Որդուն սպանում են: Հայրը վերցնում է սուրը և իր սիրտը խրում՝ վերջ տալով նաև իր կյանքին: Քաղաքը մնում է անառիկ:

Բանաստեղծը քաղաքը «չի հանձնում թշնամուն»՝ ապացուցելով, որ այն, ընկնելով հանդերձ, անառիկ մնաց դարերի համար: Պոեմն ավարտվում է ողբով: Ողբ է ինքնին ամբողջ վերջերգանքը: Վիրավոր հրաշք-քաղաքը եղնիկի պես ընկած է Ախուրյանի այն ափին և մնում է գերության մեջ: Այս ափին հանգրվանած բանաստեղծ որդին չի կարող հասնել, փարվել հրաշք երազին, ամոքել նրա սիրտը, մեղմել իր վիշտը: Իսկ չարաբաստիկ լուսինը դեռ իր տխուր առաքելության ճանապարհին է. «Լուսնի մահիկը՝ որպես իր արնոտ աղեղը ձեռքին, /Ո՛չ նետն է հանում եղնիկիս կրծքից, ո՛չ խրում է խոր: /Ո՛չ սպանում է, ո՛չ կյանք է տալիս մորս վիրավոր» (էջ 305): Ավարտվում է պոեմը՝ իր ավարտը չգտնելով: Հազարամյա ճանապարհի շփոթի մեջ կյանքի ընթացքն առկախվում է, հայտնվում անորոշության մեջ և մնում անլուծելի:

Եթե թուրանական հարևանները հայ արմատը միանշանակ հատելու և ֆիզիկական ոչնչացման ուղին են ընտրել, ապա «Խաչեղբայր» Բյուզանդը՝ ձուլման: Բանաստեղծը ձայն է բարձրացնում վտանգավոր արտագաղթի դեմ, որը հայությանը բնաջնջելու փորձված ուղիներից է: Բանաստեղծը պայծառատեսորեն կռահում է և մերօրյա գալիքը: Զարմանալին այն է, սակայն, որ այս տագնապը նա հնչեցնում է XX դ. 40-50-ականների՝ այն ժամանակվա ներգաղթի պայմաններում: Պոեմն, այսպիսով, ստանում է արդիական հնչեղություն: Արծարծված տագնապալի խնդիրներից ոչ մեկը, ցավոք, օրակարգից հանված չէ:

«Անին» գրված է հոմերոսյան հերոսական պոեմի սկզբունքներով: Ամբողջ շարադրանքը զուգադրված է քնարաշունչ ու դիպուկ գնահատումներով, հաճախ՝ դավաճանների հանդեպ դրսևորված սուր քննադատությամբ հանդերձ: Հակառակ նրանց՝ բանաստեղծը մեծարանքի խոսքեր է ասում Տրդատ ճարտարապետի, Վահրամ սպարապետի, հայրենասեր անեցիների, քաղաքում հանգրվանած գաղթականների և այլոց մասին: Հերոսներն աչքի են ընկնում բնավորության բարդությամբ, հյութեղությամբ ու գունեղությամբ, հոգեբանական մեծ խորքով: Քաղաքի պարսպին քանդակված առյուծի պես բանաստեղծը չի կարող զսպել իր ահռելի մռնչյունը՝ ընդդեմ դավի ու ոճրի: Նրա անսահման մորմոքը նման է վերքից հոսող արյան, որ երբեք չի դադարում. «Հազար տարվա կարոտ ունի իմ երազը հազարաթև /Ա՜խ, թեկուզ լուռ, դեռ ավերակ տեսնեմ Անին ու նոր մեռնեմ»: Այս տողերում արդեն Շիրազ բանաստեղծի շուրթերով խոսում է հայրենազրկված մի ողջ ժողովուրդ:

Պոետիկայի հարցում բանաստեղծը հանդես է բերում նորարարական մեծ կարողություններ: Գործադրված են տաղաչափական բազմազան ձևեր՝ երկար ու կարճ տողերի գեղեցիկ համադրմամբ: Չկա հանգավոր, իսկ երբեմն էլ անհանգ բանաստեղծության շատ թե քիչ նշանակալի հնարանք, որ մեծատաղանդ արվեստագետը կիրառած չլինի: Դրան գումարվում են պատկերավորման միջոցների օգտագործման բազմազանությունն ու գերառատությունը, նորագյուտ բառերի հեղեղը: Բայց պոեմի կարևորությունն այս դեպքում նախ բովանդակային առանձնահատկություններով ու հրատապ խնդիրներով է պայմանավորված: Ստեղծագործության հիմնական բացը, եթե այդպես կարելի է ասել, նրա մեծածավալ լինելն է: Բայց դա նաև էպիկական երկին բնորոշ առանձնահատկություն է, ինչը չի ստվերում այս բարձրարվեստ գործը:

Կատարված քննությունը երկի ուսումնասիրության առաջին փորձերից է: Այն դեռ համակողմանիորեն կարժևորեն բազմաթիվ գիտնականներ:

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ս. Մ.
Բանասիրական գիտությունների դոկտոր